



ՀՀ արդարադատության նախարար
Ռուստամ Բադալյանին

ՀՀ բարձրագույն դատական խորհրդի նախագահ
Ռուբեն Վարդազարյանին

ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավար
Կարեն Փոլադյանին

Պատճենը՝ ՀՀ ոստիկանապետ
Վահե Ղազարյանին

Ե/ 69-08/2020
« 20 » օգոստոսի 2020թ.

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոնայք,

Շուրջ մեկ ամիս է դատապարտյալներից և նրանց ազգականներից ստանում ենք բողոքներ, որ դատական նիստերը չեն կայանում դատապարտյալներին ուղեկցող գումարտակի բացակայության պատճառով:

Ելնելով վերոգրալից,

խնդրում եմ հայտնել արդյո՞ք սույն տեղեկությունները համապատասխանում են իրականության: Եթե այո.

1. ապա ինչ կամ ում պատճառով
2. քանի դատական նիստ է ձախողվել վերը նշված պատճառաբանությամբ
3. ինչն է նման «ակցիայի» հիմնավորումը

Հարգանքով,
«Վելես» իրավապաշտպան ՀԿ
նախագահ Մ. Պողոսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան, Խանջյան - 51

հեռ: 011-56-63-55, ֆաքս (+37410) 56-50-62

« 04 » 09 20 20

Թիվ- 10/6-719

«Վելես» իրավապաշտպան ՀԿ նախագահ
Մարինա Պողոսյանին

ք.Երևան, Չարենցի փ. 4շ. 121բն.
էլ. փոստ՝ velesngo@gmail.com; info@veles.am

Հարգելի՛ փրկին Պողոսյան

Ձեր 20.08.2020 թվագրմամբ թիվ Ե69-08/2020 գրության՝ ՀՀ ոստիկանության պետ, գնդապետ Վ. Ղազարյանին հասցեագրված օրինակը 01.09.2020 թվականին ստացվել է ՀՀ ոստիկանությունում և քննարկվել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչությունում:

Քննարկման արդյունքում գրության մեջ նշված հարցադրումներին ի պատասխան հայտնում եմ, որ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ուղեկցող գումարտակը պատշաճ կատարում է իր առջև դրված խնդիրները՝ ՀՀ կառավարության 02.04.2009թ. ՀՀ 2երբակալված և կալանավորված անձանց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից ուղեկցման և պահպանման կարգը հաստատելու մասին» թիվ 351-Ն որոշման պահանջներին համապատասխան: Ձերբակալված կամ կալանավորված անձանց ուղեկցելու վերաբերյալ համապատասխան մարմիններից ստացված հայտերը ուղեկցող գումարտակի կամ նշված ստորաբաժանման ծառայողների բացակայության պատճառաբանությամբ չկատարելու վերաբերյալ տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը:

Հարգանքով՝

Պետ,
ոստիկանության գնդապետ Ա. Գազարյան